Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 6-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգով, **որոշում եմ.**

1. Քաղաքացի Ռոբերտ Գագիկի Կարապետյանին տալ նկուղային հարկով մեկ հարկանի բնակելի տան, զրուցարանի, լողավազանի կառուցման և պարսպապատման շինարարության թույլտվություն՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 43-րդ փողոցի թիվ 18-20 հասցեի հողամասում:

2. Պարտավորեցնել Ռոբերտ Գագիկի Կարապետյանին՝ շինարարական աշխատանքներն սկսելուց առնվազն երեք օր առաջ, տեղեկացնել համայնքի ղեկավարին, համաձայն N 2-5 ձևի:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ Ռոբերտ Գագիկի Կարապետյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2019 թ. հոկտեմբերի 21
գ. Ջրվեժ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶՐԿԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«21» հոկտեմբերի 2019 թվականի N 689-Ա

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 6-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգով, **որոշում եմ.**

1. Քաղաքացի Աիդա Գագիկի Գագիկյանին տալ 170 հոգու համար ռեստորանի կառուցման շինարարության թույլտվություն՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող Զրվեժ համայնքի Զրվեժ գյուղի 5-րդ թաղամասի թիվ 2/2 հասցեի հողամասում:

2. Պարտավորեցնել Աիդա Գագիկի Գագիկյանին՝ շինարարական աշխատանքներն սկսելուց առնվազն երեք օր առաջ, տեղեկացնել համայնքի ղեկավարին, համաձայն N 2-5 ձևի:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ Աիդա Գագիկի Գագիկյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ



2019 թ. հոկտեմբերի 21
գ. Զրվեժ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«21» հոկտեմբերի 2019 թվականի N 690-Ա

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՎԱՐԵԼԱՀՈՂՆ ԱՅԳՈՒ ՓՈԽԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել քաղաքացի Սամվել Գեորգիի Թադևոսյանի (ծնված՝ 1959 թվականի հուլիսի 9-ին) լիազոր անձ՝ Էդիկ Հովիկի Վիրաբյանի (ծնված՝ 1984 թվականի հունվարի 24-ին) դիմումը, որով ցանկություն է հայտնել սեփականության իրավունքով Սամվել Գեորգիի Թադևոսյանին պատկանող Զրվեժ համայնքի Զրվեժ գյուղի թիվ 07-057-0333-0100 կադաստրային ծածկագրով 0,689397 հեկտար մակերեսով գյուղատնտեսական նշանակության 4-րդ կարգի անջրդի վարելահողից հողակտորը ավելի բարձրարժեք հողատեսքի՝ այգու փոխադրելու մասին (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 03092019-07-0070 վկայական, տրված 2019 թվականի սեպտեմբերի 3-ին):

Հիմք ընդունելով վերը նշվածը և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի սեպտեմբերի 17-ի թիվ 1066-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ կետի պահանջով, **որոշում եմ.**

1. Սամվել Գեորգիի Թադևոսյանին սեփականության իրավունքով պատկանող Զրվեժ համայնքի Զրվեժ գյուղի 0,689397 հեկտար մակերեսով գյուղատնտեսական նշանակության հողատեսքը՝ 4-րդ կարգի անջրդի վարելահողը, փոխադրել 4-րդ կարգի կորիզավոր այգու:

2. Աշխատակազմի առաջատար մասնագետ Հուսիկ Գրիգորյանին՝ իրականացնել հսկողություն սույն որոշման առաջին կետում նշված գյուղատնտեսական ցածրարժեք հողատեսքն ավելի բարձրարժեք հողատեսքի փոխադրելու նկատմամբ և պետական գրանցում ստանալուց հետո ընդգրկել համայնքի տարեկան, ընթացիկ հաշվառման և համայնքի հողային հաշվեկշռում:

3. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է աշխատակազմի քարտուղար Սուսաննա Թադևոսյանը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ Սամվել Գեորգիի Թադևոսյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

2019 թ. հոկտեմբերի 21
գ. Զրվեժ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«22» հոկտեմբերի 2019 թվականի N 691-Ա

ՀՈՂԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ԵՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴԻԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի առաջին մասի 1-ին կետի, «Քաղաքաշինության մասին» օրենքի 14³-րդ հոդվածի 12-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1920-Ն որոշմամբ հաստատված կարգի 25-րդ կետի, 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48 և 51-րդ կետերի պահանջներով և հիմք ընդունելով համայնքի ավագանու 2014 թվականի ապրիլի 11-ի թիվ 14-Ն որոշումը, **որոշում եմ.**

1. Էտուար Յովսէփի Թութունճեանին սեփականության իրավունքով պատկանող Զրվեժ համայնքի Զրվեժ գյուղի 07-057-0333-0103 կադաստրային համարի գյուղատնտեսական նշանակության վարելահողը՝ 500,0 քառ.մ մակերեսով, փոխադրել բնակավայրի բնակելի կառուցապատման հողերի կատեգորիա՝ օրենսդրությամբ սահմանված կարգով բնակելի կառուցապատման համար (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 16102019-07-0036, տրված 2019 թվականի հոկտեմբերի 16-ին):

2. Էտուար Յովսէփի Թութունճեանին սեփականության իրավունքով պատկանող Զրվեժ համայնքի Զրվեժ գյուղի 07-057-0333-0103 կադաստրային համարի 500,0 քառ.մ մակերեսով տնամերձ հողամասին տրամադրել հասցե՝ համայնք Զրվեժ, գյուղ Զրվեժ, 2-րդ թաղամաս, թիվ 3/29:

3. Առաջարկել էտուար Յովսէփի Թութունճեանին, եռամսյա ժամկետում Զրվեժ համայնքի բյուջեի 900105228176 հաշվին վճարելու հողամասի նպատակային նշանակության փոփոխման պահին առկա կադաստրային արժեքների տարբերությունը՝ 2 242 500 (երկու միլիոն երկու հարյուր քառասուներկու հազար հինգ հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամ:

4. Աշխատակազմի առաջատար մասնագետ Հուսիկ Գրիգորյանին՝

1) իրականացնել հսկողություն սույն որոշման երրորդ կետի նկատմամբ,

2) սույն որոշման առաջին կետում նշված հողի նպատակային նշանակության փոփոխությունը պետական գրանցում ստանալուց հետո ընդգրկել համայնքի տարեկան, ընթացիկ հաշվառման և համայնքի հողային հաշվեկշռում:

5. Աշխատակազմի քարտուղարին՝ հողամասի նպատակային նշանակության կատարված փոփոխության մասին 10-օրյա ժամկետում տեղեկացնել քաղաքաշինության պետական կոմիտե և անշարժ գույքի նկատմամբ իրավունքները գրանցող պետական մարմին:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում էտուար Յովսէփի Թութունճեանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2019 թ. հոկտեմբերի 22
գ. Զրվեժ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«22» հոկտեմբերի 2019 թվականի N 692-Ա

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 8-Ի ԹԻՎ 265-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ և 34-րդ հոդվածի 1-ին մասերի, «Համայնքային ծառայության մասին» օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2019 թվականի հոկտեմբերի 21-ի թիվ 217-Ա որոշումը, **որոշում եմ.**

1. Համայնքի ղեկավարի 2017 թվականի դեկտեմբերի 8-ի «Համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողով կազմավորելու և համայնքի ղեկավարի 2016 թվականի դեկտեմբերի 6-ի թիվ 251-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 265-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.

- 1) որոշման առաջին կետում «Մկրտչյան Ռոստամ» բառերը փոխարինել «Գեղամյան Տիգրան» բառերով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



ՌՈՔԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2019 թ. հոկտեմբերի 22
գ. Զրվեժ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«22» հոկտեմբերի 2019 թվականի N 693-Ա

ԱՎԱՐՏՎԱԾ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՕՐՅԵԿՏԸ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԸՆԴՈՒՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 5-րդ կետով, Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի ջրագծերի կառուցման աշխատանքների շահագործման ընդունելու նպատակով (գնման պայմանագիր՝ «ԿՄՋՀ-ԳՀԱՇՁԲ-18/33»), **որոշում եմ.**

1. Ստեղծել հանձնաժողով հետևյալ կազմով.

- | | |
|--|---|
| Սիրականյան Վահե | - աշխատակազմի գլխավոր մասնագետ (նախագահ, գնումների պատասխանատու ստորաբաժանման ղեկավար), |
| Կորյուն Կարապետյան | - Ջրվեժի համայնքի Ձորաղբյուր գյուղի վարչական ղեկավար, |
| «Սեյմաանվտանգություն» ՍՊԸ-ի ներկայացուցիչ | - Հեղինակային հսկողություն իրականացնող (համաձայնությամբ), |
| «ԹԵՐՄՈՇԻՆԹԵԼ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ | - Տեխնիկական հսկողություն իրականացնող (համաձայնությամբ), |
| Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի ներկայացուցիչ | - Վերահսկողություն իրականացնող (համաձայնությամբ), |
| Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ներկայացուցիչ | - Վերահսկողություն իրականացնող (համաձայնությամբ), |
| Մայիս Վահրադյան | - «Վահրադյան Շին» ՍՊԸ-ի տնօրեն (գլխավոր կապալառու): |

2. Ընդունող հանձնաժողովի աշխատանքները կազմակերպել 2019 թվականի հոկտեմբերի 29-ին, ժամը 16:00-ին, Ջրվեժի համայնքապետարանի շենքում, հասցեն՝ համայնք Ջրվեժ, գյուղ Ջրվեժ, Մելքոնյան փողոց 76:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՌՈՔԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2019 թ. հոկտեմբերի 22

գ. Ջրվեժ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«22» հոկտեմբերի 2019 թվականի N 694-Ա

ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» օրենսգրքի 48-րդ և 219¹-րդ հոդվածների պահանջներով և հաշվի առնելով այն, որ քաղաքացի Անդրանիկ Ասպարիկի Հարությունյանի կողմից Զրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի 07-042-1072-0001 կադաստրային ծածկագրով հողամասի տարածքում կատարվել է համայնքային սեփականություն հանդիսացող հողամասից որոշակի հատվածի ինքնակամ զավթում, **որոշում եմ.**

1.Քաղաքացի Անդրանիկ Ասպարիկի Հարությունյանին ենթարկել վարչական պատասխանատվության տուգանքի ձևով՝ 100 000 (մեկ հարյուր հազար) դրամ գումարի չափով:

2.Պարտավորեցնել Անդրանիկ Ասպարիկի Հարությունյանին՝ օրենքով նախատեսված ժամկետում մուծելու տուգանքը Զրվեժ համայնքի բյուջեի N 900105221106 հաշվին:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ Անդրանիկ Ասպարիկի Հարությունյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



ՈՐԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2019 թ. հոկտեմբերի 22
գ. Զրվեժ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«23» հոկտեմբերի 2019 թվականի N 695-Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել քաղաքացի Գևորգ Խաչատուրի Գրիգորյանի (ծնված՝ 1978 թվականի հուլիսի 31-ին) դիմումը, որով ցանկություն է հայտնել օրինականացնել սեփականության իրավունքով իրեն պատկանող Զրվեժ համայնքի Զրվեժ գյուղի Մելքոնյան փողոցի 3-րդ փակուղու թիվ 9 հասցեի տնամերձ հողամասում ինքնակամ կառուցված շինությունները (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական 28082019-07-0108, տրված 2019 թվականի օգոստոսի 28-ին, «ԳԵՈՎԱԴ 55» ՍՊԸ-ի կողմից 2019 թվականի հոկտեմբերի 18-ին կազմված և սահմանված կարգով հաստատված հատակագիծը):

Համաձայն համայնքի կադաստրային քարտեզի և «ԳԵՈՎԱԴ 55» ՍՊԸ-ի կողմից կազմված և սահմանված կարգով հաստատված հատակագծի պարզվել է, որ Գևորգ Խաչատուրի Գրիգորյանին սեփականության իրավունքով պատկանող Զրվեժ համայնքի Զրվեժ գյուղի Մելքոնյան փողոցի 3-րդ փակուղու թիվ 9 հասցեի տնամերձ հողամասում 2018 թվականին ինքնակամ կառուցվել է թիվ 1 բնակելի տունը՝ 23,29 քառ.մետր և 75,79 քառ.մետր, թիվ 2 և թիվ 3 ծածկերը՝ 11,58 քառ.մետր և 20,32 քառ.մետր, թիվ 4 աստիճանավանդակը՝ 4,04 քառ.մետր, թիվ 5 հենապատը՝ 2,95 քառ.մետր, թիվ 6 և թիվ 7 պարիսպները՝ 5,1 քառ.մետր և 9,02 քառ.մետր արտաքին մակերեսներով:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 10, 11, 13 կետերի պահանջներով և հաշվի առնելով այն հանգամանքը, որ Գևորգ Խաչատուրի Գրիգորյանին սեփականության իրավունքով պատկանող Զրվեժ համայնքի Զրվեժ գյուղի Մելքոնյան փողոցի 3-րդ փակուղու թիվ 9 հասցեի տնամերձ հողամասում ինքնակամ կառուցված շինությունների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, շինությունները կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, **որոշում եմ.**

1. Գևորգ Խաչատուրի Գրիգորյանին սեփականության իրավունքով պատկանող Զրվեժ համայնքի Զրվեժ գյուղի Մելքոնյան փողոցի 3-րդ փակուղու թիվ 9 հասցեի տնամերձ հողամասում ինքնակամ կառուցված շինությունները՝ թիվ 1 բնակելի տունը, թիվ 2 և թիվ 3 ծածկերը, թիվ 4 աստիճանավանդակը, թիվ 5 հենապատը, թիվ 6 և թիվ 7 պարիսպները համարել օրինական:

2. Սահմանել, որ հողամասի սեփականատերը.

1) սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում Զրվեժ համայնքի բյուջեի N 900105228218 հաշվին պետք է վճարի Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաշվարկված 340 304 (երեք հարյուր քառասուն հազար երեք հարյուր չորս) Հայաստանի Հանրապետության դրամ օրինականացման վճարը:

2) իր միջոցների հաշվին պետք է վճարի կառույցի գույքային իրավունքների պետական գրանցման հետ կապված վճարներն ու տուրքերը:

3. Սահմանել, որ սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում օրինականացման համար սահմանված վճարումը չկատարելու դեպքում, նշված ինքնակամ կառույցը ենթակա չէ պետական գրանցման, իսկ սույն որոշումը համարվում է ուժը կորցրած:

4. Որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել աշխատակազմի գլխավոր մասնագետ Վահե Սիրակայանի վրա:

5. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է աշխատակազմի քարտուղար Սուսաննա Թարևոսյանը:

6. Սույն որոշման ուժի մեջ է մտնում՝ Գևորգ Խաչատուրի Գրիգորյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

2019 թ. հոկտեմբերի 23

զ. Զրվեժ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶՐԿԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«23» հոկտեմբերի 2019 թվականի N 696-Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել քաղաքացի Հրանուշ Սայադի Բարսեղյանի (ծնված՝ 1966 թվականի օգոստոսի 19-ին) և Քնարիկ Սերգոյի Հարությունյանին (ծնված՝ 1988 թվականի օգոստոսի 29-ին) դիմումը, որով ցանկություն են հայտնել օրինականացնել ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով իրենց պատկանող Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 6-րդ փողոցի 2-րդ նրբանցքի թիվ 3 հասցեի տնամերձ հողամասում ինքնակամ կառուցված շինությունները, ինչպես նաև գույքը բաժանելու երկու առանձին մասերի (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 25042019-07-0029, տրված 2019 թվականի ապրիլի 25-ին, անհատ ձեռնարկատեր Վալերիկ Գալստյանի կողմից 2019 թվականի հոկտեմբերի 16-ին կազմված և սահմանված կարգով հաստատված հատակագիծը):

Համաձայն համայնքի կադաստրային քարտեզի և անհատ ձեռնարկատեր Վալերիկ Գալստյանի կողմից կազմված և սահմանված կարգով հաստատված հատակագծի պարզվել է, որ Հրանուշ Սայադի Բարսեղյանը և Քնարիկ Սերգոյի Հարությունյանը ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով իրենց պատկանող Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 6-րդ փողոցի 2-րդ նրբանցքի թիվ 3 հասցեի տնամերձ հողակտորում 2003-2019 թվականներին ինքնակամ կառուցել են պարիսպ՝ 2,2 քառ.մետր, թիվ 2 և թիվ 3 ծածկարաններ՝ 9,61 քառ.մետր և 4,39 քառ.մետր արտաքին մակերեսներով:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48 և 51-րդ կետերի, 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 10, 11 և 13-րդ կետերի պահանջներով և հաշվի առնելով այն, որ Հրանուշ Բարսեղյանին և Քնարիկ Հարությունյանին ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 6-րդ փողոցի 2-րդ նրբանցքի թիվ 3 հասցեի տնամերձ հողակտորում ինքնակամ կառուցված շինությունների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, շինությունները կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, **որոշում եմ.**

1. Հրանուշ Բարսեղյանին և Քնարիկ Հարությունյանին ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 6-րդ փողոցի 2-րդ նրբանցքի թիվ 3 հասցեի տնամերձ հողակտորում ինքնակամ կառուցված շինությունները՝ ծածկարանները՝ 14,0 քառ.մետր, պարիսպը՝ 2,2 քառ.մետր արտաքին մակերեսներով, համարել օրինական:

2. Սահմանել, որ հողամասի սեփականատերերը.

1) սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում Ջրվեժ համայնքի բյուջեի N 900105228218 հաշվին պետք է վճարեն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաշվարկված 25 272 (քսանհինգ հազար երկու հարյուր յոթանասուններկու) Հայաստանի Հանրապետության դրամ օրինականացման վճարը:

2) իրենց միջոցների հաշվին պետք է վճարեն կառույցի գույքային իրավունքների պետական գրանցման հետ կապված վճարներն ու տուրքերը:

3. Սահմանել, որ սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում օրինականացման համար սահմանված վճարումը չկատարելու դեպքում, նշված ինքնակամ կառույցը ենթակա չէ պետական գրանցման, իսկ սույն որոշումը համարվում է ուժը կորցրած:

4. Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 6-րդ փողոցի 2-րդ նրբանցքի թիվ 3 հասցեի տնամերձ հողամասից բաժանված $S_1=197,7$ քառ.մետր մակերեսով գույքին տրամադրել հասցե՝ համայնք Ջրվեժ, գյուղ Ջրվեժ, 6-րդ փողոց, 2-րդ նրբանցք, թիվ 3, $S_2=279,4$ քառ.մետր մակերեսով գույքին տրամադրել հասցե՝ համայնք Ջրվեժ, գյուղ Ջրվեժ, 6-րդ փողոց, 2-րդ նրբանցք, թիվ 3/1:

5. Որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել աշխատակազմի առաջատար մասնագետ Հուսիկ Գրիգորյանի վրա:

6. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է աշխատակազմի քարտուղար Սուսաննա Թադևոսյանը:

7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Հրանուշ Բարսեղյանին և Քնարիկ Հարությունյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

2019 թ. հոկտեմբերի 23

գ. Ջրվեժ

Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«23» հոկտեմբերի 2019 թվականի N 697-Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԾԱԾԿՈՅԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել Կարինե Հրաչիկի Հարությունյանի (ծնված՝ 1972 թվականի հունվարի 23-ին), Գոհարիկ Հրաչիկի Խաչատրյանի (ծնված՝ 1964 թվականի հունվարի 29-ին) և Գագիկ Հրաչիկի Խաչատրյանի (ծնված՝ 1960 թվականի մայիսի 21-ին) դիմումը, որով ցանկություն են հայտնել օրինականացնել ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով իրենց պատկանող Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր-3 այգետարածքի 1-ին թաղամասի թիվ 17 հասցեի հողամասում ինքնակամ կառուցված ծածկոցը (հիմք՝ ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրեր, վավերացված 2019 թվականի ապրիլի 19-ին, անհատ ձեռնարկատեր Տիգրան Փոթիկյանի կողմից 2019 թվականի սեպտեմբերի 24-ին կազմված և սահմանված կարգով հաստատված հատակագիծը):

Համաձայն համայնքի կադաստրային քարտեզի և անհատ ձեռնարկատեր Տիգրան Փոթիկյանի կողմից սահմանված կարգով հաստատված հատակագծի պարզվել է, որ Կարինե Հարությունյանին, Գոհարիկ և Գագիկ Խաչատրյաններին ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր-3 այգետարածքի 1-ին թաղամասի թիվ 17 հասցեի հողամասում 2010 թվականին ինքնակամ կառուցվել է ծածկոց՝ 4,92 քառ.մետր մակերեսով:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 10, 11, 13-րդ կետերի պահանջներով և հաշվի առնելով այն, որ Կարինե Հարությունյանին, Գոհարիկ և Գագիկ Խաչատրյաններին ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր-3 այգետարածքի 1-ին թաղամասի թիվ 17 հասցեի հողամասում ինքնակամ կառուցված ծածկոցը պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, ծածկոցը կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, **որոշում են.**

1. Կարինե Հարությունյանին, Գոհարիկ և Գագիկ Խաչատրյաններին ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր-3 այգետարածքի 1-ին թաղամասի թիվ 17 հասցեի հողամասում ինքնակամ կառուցված ծածկոցը համարել օրինական:

2. Սահմանել, որ հողամասի սեփականատերերը.

1) սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում Ջրվեժ համայնքի բյուջեի N 900105221213 հաշվին պետք է վճարեն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաշվարկված 7 676 (յոթ հազար վեց հարյուր յոթանասունվեց) Հայաստանի Հանրապետության դրամ օրինականացման վճարը:

2) իրենց միջոցների հաշվին պետք է վճարեն կառույցի գույքային իրավունքների պետական գրանցման հետ կապված վճարներն ու տուրքերը:

3. Սահմանել, որ սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում օրինականացման համար սահմանված վճարումը չկատարելու դեպքում, նշված ինքնակամ կառույցը ենթակա չէ պետական գրանցման, իսկ սույն որոշումը համարվում է ուժը կորցրած:

4. Որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել աշխատակազմի գլխավոր մասնագետ Վահե Սիրականյանի վրա:

5. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է աշխատակազմի քարտուղար Սուսաննա Գաղափարյանը:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ Կարինե Հարությունյանին, Գոհարիկ և Գագիկ Խաչատրյաններին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

2019 թ. հոկտեմբերի 23

գ. Ջրվեժ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«23» հոկտեմբերի 2019 թվականի N 698-Ա

ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Զրվեժ համայնքի ղեկավարի որոշման կարգավորման առարկան.

Քաղաքացի Զավեն Նանյանը հանդիսանալով գույքահարկ վճարող սուբյեկտ, «Գույքահարկի մասին» օրենքով սահմանված կարգով չի կատարել Զրվեժ համայնքի բյուջեի հանդեպ հարկերը վճարելու պարտավորությունը, ինչի կապակցությամբ 2019 թվականի սեպտեմբերի 26-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի հիմքով և 34-րդ հոդվածով Զրվեժի համայնքապետարանի աշխատակազմում հարուցվել է վարչական վարույթ՝ գույքահարկի գումարի գանձման հարցի քննության նպատակով:

Վարչական ակտը ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.

Համաձայն աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, ծրագրերի կազմման և համակարգման բաժնի կողմից 2019 թվականի հոկտեմբերի 23-ին տրված N 243625193332092628 տեղեկանքի Զավեն Նանյանը Զրվեժ համայնքի բյուջեի հանդեպ մարել է հարկային պարտավորությունները:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 50-րդ հոդվածի երկրորդ մասի «ա» կետի համաձայն՝ վարչական մարմնի նախաձեռնությամբ հարուցված վարչական վարույթը կարող է կարճվել, եթե անձը, ում հասցեագրված է լինելու վարչական ակտը, վերացրել է օրենքի կամ իրավական այլ ակտի պահանջների խախտումները կամ պատշաճ միջոցներ է ձեռնարկել խախտումները կանխելու ուղղությամբ և նման դեպքերում օրենքն այդ խախտումների վերաբերյալ չի պահանջում վարչական ակտի ընդունում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 38-րդ, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 50-րդ հոդվածի երկրորդ մասի «ա» կետով, 53-րդ, 58-60-րդ հոդվածներով, **որոշում եմ.**

1. Քաղաքացի Զավեն Նանյանի նկատմամբ 2019 թվականի սեպտեմբերի 26-ին հարուցված վարչական վարույթը կարճել:

2. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Զրվեժ համայնքի ղեկավարին՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում կամ դատական կարգով՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:

3. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն իրականացնում է աշխատակազմի քարտուղարը:

4. Որոշման մեկ օրինակը եռօրյա ժամկետում հանձնել Զավեն Նանյանին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Բ. ՊԵՏՐՈՍՅԱՆ



2019 թ. հոկտեմբերի 23
գ. Զրվեժ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«24» հոկտեմբերի 2019 թվականի N 699-Ա

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 6-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգով, **որոշում եմ**.

1.Քաղաքացի Գոհարիկ Արշակի Ստեփանյանին տալ երկհարկանի բնակելի տան կառուցման և բնակելի տունը ամառային խոհանոցի ձևափոխման շինարարության թույլտվություն՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող Զրվեժ համայնքի Զրվեժ գյուղի 39-րդ փողոցի թիվ 17 հասցեի հողամասում:

2.Պարտավորեցնել Գոհարիկ Արշակի Ստեփանյանին՝ շինարարական աշխատանքներն սկսելուց առնվազն երեք օր առաջ, տեղեկացնել համայնքի ղեկավարին, համաձայն N 2-5 ձևի:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ Գոհարիկ Արշակի Ստեփանյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ



2019 թ. հոկտեմբերի 24
գ. Զրվեժ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«24» հոկտեմբերի 2019 թվականի N 700-Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել քաղաքացի Օֆելյա Վահանի Նազարյանի (ծնված՝ 1934 թվականի հոկտեմբերի 20-ին) դիմումը, որով ցանկություն է հայտնել օրինականացնել սեփականության իրավունքով իրեն պատկանող Զրվեժ համայնքի Ձորաղբյուր այգետարածքի 22-րդ տեղամասի թիվ 2 հասցեի հողամասում ինքնական կառուցված շինությունները (հիմք՝ «Հայաստանի ազգային արխիվ» ՊՈԱԿ-ի կողմից 2019 թվականի հուլիսի 3-ին տրված թիվ Հ-9601 արխիվային տեղեկանքը, «ԳԵՈՂԱԴ 55» ՍՊԸ-ի կողմից 2019 թվականի հոկտեմբերի 16-ին կազմված և սահմանված կարգով հաստատված հատակագիծը):

Համաձայն «ԳԵՈՂԱԴ 55» ՍՊԸ-ի կողմից կազմված և սահմանված կարգով հաստատված հատակագծի և եզրակցության պարզվել է, որ Օֆելյա Վահանի Նազարյանին սեփականության իրավունքով պատկանող Զրվեժ համայնքի Ձորաղբյուր այգետարածքի 22-րդ տեղամասի թիվ 2 հասցեի հողամասում 1988 թվականին ինքնական կառուցվել են՝ այգետնակ կիսանկուղ 65,98 քառ.մետր, այգետնակ 1-ին հարկ՝ 65,07 քառ.մետր, այգետնակ ձեղնահարկ՝ 39,13 քառ.մետր, բաց պատշգամբ՝ 9,88 քառ.մետր, հարթակ՝ 3,05 քառ.մետր, զուգարան՝ 0,76 քառ.մետր, աստիճանավանդակներ՝ ընդհանուր 8,77 քառ.մետր և հենապատեր՝ ընդհանուր 18,1 քառ.մետր արտաքին մակերեսներով (կառուցման տարեթվերի վերաբերյալ համայնքապետարանում տվյալները բացակայում են, որի համար հիմք են հանդիսացել քաղաքացի Օֆելյա Վահանի Նազարյանի դիմումում նշված և «ԳԵՈՂԱԴ 55» ՍՊԸ-ի կողմից ներկայացված եզրակացության մեջ նշված տարեթվերը):

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 10, 11, 22.1-րդ կետերի պահանջներով և հաշվի առնելով այն, որ Օֆելյա Վահանի Նազարյանին սեփականության իրավունքով պատկանող Զրվեժ համայնքի Ձորաղբյուր այգետարածքի 22-րդ տեղամասի թիվ 2 հողամասում ինքնական կառուցված շենք-շինությունների պահպանումը չեն խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, շենք-շինությունները կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերմիտուտ պահանջելու իրավունք, որոշում եմ.

1. Օֆելյա Վահանի Նազարյանին սեփականության իրավունքով պատկանող Զրվեժ համայնքի Ձորաղբյուր այգետարածքի 22-րդ տեղամասի թիվ 2 հասցեի հողամասում ինքնական կառուցված այգետնակ կիսանկուղը 65,98 քառ.մետր, այգետնակ 1-ին հարկը՝ 65,07 քառ.մետր, այգետնակ ձեղնահարկը՝ 39,13 քառ.մետր, բաց պատշգամբը՝ 9,88 քառ.մետր, հարթակը՝ 3,05 քառ.մետր, զուգարանը՝ 0,76 քառ.մետր, աստիճանավանդակները՝ ընդհանուր 8,77 քառ.մետր և հենապատերը՝ ընդհանուր 18,1 քառ.մետր արտաքին մակերեսներով, համարել օրինական:

2. Որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել աշխատակազմի գլխավոր մասնագետ Վահե Սիրականյանի վրա:

3. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է աշխատակազմի քարտուղար Սուսաննա Թադևոսյանը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ Օֆելյա Վահանի Նազարյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ռ.ՊԵՏՐՈՍՅԱՆ

2019 թ. հոկտեմբերի 24
գ. Զրվեժ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«24» հոկտեմբերի 2019 թվականի N 701-Ա

ԳՈՒՄԱՐԻ ԳԱՆՁՄԱՆ ՊԱՀԱՆՋ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Զրվեժ համայնքի ղեկավարի որոշման կարգավորման առարկան.

Քաղաքացի Սլավիկ Հարությունյանը, հանդիսանալով գույքահարկ վճարող սուբյեկտ, «Գույքահարկի մասին» օրենքով սահմանված կարգով չի կատարել գույքահարկ վճարելու պարտականությունը, ինչի կապակցությամբ 2019 թվականի սեպտեմբերի 30-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի հիմքով Զրվեժի համայնքապետարանի աշխատակազմում հարուցվել է վարչական վարույթ՝ գույքահարկի գումարի գանձման հարցի քննության նպատակով:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

Վարչական ակտը ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.

Համաձայն Հայաստանի Հանրապետության ՃՈՄ Կոտայքի հաշվառման քննական բաժանմունքի կողմից տրված ելակետային տվյալների՝ քննարկվող փոխադրամիջոցը՝ NISSAN ELGRAND 3.5 L մակնիշի 35NV624 պետհամարանիշի հանդիսանում է քաղաքացի Սլավիկ Հարությունյանի սեփականությունը, ինչը «Գույքահարկի մասին» օրենքով հանդիսանում է հարկվող օբյեկտ: Համայնքի բյուջե վճարման ենթակա փոխադրամիջոցի գույքահարկը կազմում է 107 888 (մեկ հարյուր յոթ հազար ութ հարյուր ութսունութ) Հայաստանի Հանրապետության դրամ, որը 2017-2018 թվականների ժամանակահատվածում չի վճարվել:

Քաղաքացի Սլավիկ Հարությունյանի՝ նշված ժամանակահատվածի համար փոխադրամիջոցի գույքահարկը օրենքով սահմանված ժամկետում չվճարելու արդյունքում առաջացել է տույժ՝ 20 225 (քսան հազար երկու հարյուր քսանհինգ) Հայաստանի Հանրապետության դրամի չափով:

2019 թվականի սեպտեմբերի 30-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի հիմքով հարուցված վարչական վարույթի շրջանակներում 2019 թվականի հոկտեմբերի 18-ին հրավիրվել են վարչական վարույթի լսումներ, որին մասնակցելու նպատակով պատշաճ ծանուցվել է քաղաքացի Սլավիկ Հարությունյանը: Վերջինս վարչական վարույթի լսումներին չի ներկայացել:

Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.

Համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության՝ յուրաքանչյուր ոք պարտավոր է օրենքով սահմանված կարգով և չափով մուծել հարկեր, կատարել պարտադիր այլ վճարումներ:

Համաձայն «Գույքահարկի մասին» օրենքի 2-րդ հոդվածի՝ գույքահարկը սեփականության իրավունքով նշված օրենքի 3-րդ հոդվածում նշված անձանց պատկանող հարկվող օբյեկտ համարվող գույքի համար սույն օրենքով սահմանվող կարգով և չափով համապատասխան բյուջեներ վճարվող ուղղակի հարկ է, որը կախված չէ հարկ վճարողների տնտեսական գործունեության արդյունքներից:

Իրավահարաբերությունների պահին գործող Հարկային օրենսգրքի 447-րդ հոդվածի 6-րդ մասի՝ Օրենսգրքին ուժի մտնելու օրվան հաջորդող ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար հարկ վճարողը կամ հարկային գործակալը վճարում է տույժ՝ 0.075 տոկոսի չափով, այդ թվում՝ նաև այն դեպքում, եթե տույժերի հաշվարկն սկսվել է մինչև Օրենսգրքի ուժի մեջ մտնելը:

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի՝ համայնքի ղեկավարը օրենքով սահմանված կարգով կազմակերպում է գույքահարկի գանձումը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 38-րդ, «Գույքահարկի մասին» օրենքի 2-րդ, 3-րդ, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 53-րդ, 58-60-րդ հոդվածներով, **որոշում եմ.**

1. Քաղաքացի Սլավիկ Հարությունյանից հոգուտ Ջրվեժ համայնքի բյուջեի գանձել 107 888 (մեկ հարյուր յոթ հազար ութ հարյուր ութսունույթ) Հայաստանի Հանրապետության դրամ, որպես վճարման ենթակա փոխադրամիջոցի գույքահարկի գումար, որից՝ 20 225 (քսան հազար երկու հարյուր քսանհինգ) Հայաստանի Հանրապետության դրամը որպես պարտավորությունը չկատարելու արդյունքում հաշվարկված տույժ:

2. Որոշումն օրենքով սահմանված կարգով եռօրյա ժամկետում պատշաճ ձևով ուղարկել Սլավիկ Հարությունյանին:

3. Որոշումն ուժի մեջ է մտնում վարույթի մասնակիցներին իրազեկելուն հաջորդող օրվանից:

4. Սույն որոշումը կարող է բողոքարկվել վարչական կարգով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ Վարչական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով՝ վարչական ակտն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում:

5. Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով այն ենթակա է հարկադիր կատարման՝ Հայաստանի Հանրապետության ԱՆ ԴԱՀԿ ծառայության միջոցով՝ անբողոքարկելի դառնալուց հետո:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Ռ.ՊԵՏՐՈՍՅԱՆ

2019 թ. հոկտեմբերի 24
գ. Ջրվեժ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«24» հոկտեմբերի 2019 թվականի N 702-Ա

ԳՈՒՄԱՐԻ ԳԱՆՁՄԱՆ ՊԱՀԱՆՋ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Զրվեժ համայնքի ղեկավարի որոշման կարգավորման առարկան.

Քաղաքացի Գարեգին Մարգարյանը, հանդիսանալով գույքահարկ վճարող սուբյեկտ, «Գույքահարկի մասին» օրենքով սահմանված կարգով չի կատարել գույքահարկ վճարելու պարտականությունը, ինչի կապակցությամբ 2019 թվականի սեպտեմբերի 30-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի հիմքով Զրվեժի համայնքապետարանի աշխատակազմում հարուցվել է վարչական վարույթ՝ գույքահարկի գումարի գանձման հարցի քննության նպատակով:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

Վարչական ակտը ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.

Համաձայն Հայաստանի Հանրապետության ՃՈԾ Կոտայքի հաշվառման քննական բաժանմունքի կողմից տրված ելակետային տվյալների՝ քննարկվող փոխադրամիջոցը՝ MERCEDES-BENZ E 320 մակնիշի 35DT945 պետհամարանիշի հանդիսանում է քաղաքացի Գարեգին Մարգարյանի սեփականությունը, ինչը «Գույքահարկի մասին» օրենքով հանդիսանում է հարկվող օբյեկտ: Համայնքի բյուջե վճարման ենթակա փոխադրամիջոցի գույքահարկը կազմում է 152 967 (մեկ հարյուր հիսուներկու հազար ինը հարյուր վաթսույնյոթ) Հայաստանի Հանրապետության դրամ, որը 2017-2018 թվականների ժամանակահատվածում չի վճարվել:

Քաղաքացի Գարեգին Մարգարյանի՝ նշված ժամանակահատվածի համար փոխադրամիջոցի գույքահարկը օրենքով սահմանված ժամկետում չվճարելու արդյունքում առաջացել է տույժ՝ 32 634 (երեսուներկու հազար վեց հարյուր երեսունչորս) Հայաստանի Հանրապետության դրամի չափով:

2019 թվականի սեպտեմբերի 30-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի հիմքով հարուցված վարչական վարույթի շրջանակներում 2019 թվականի հոկտեմբերի 18-ին հրավիրվել են վարչական վարույթի լսումներ, որին մասնակցելու նպատակով պատշաճ ծանուցվել է քաղաքացի Գարեգին Մարգարյանը: Վերջինս վարչական վարույթի լսումներին չի ներկայացել:

Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.

Համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության՝ յուրաքանչյուր ոք պարտավոր է օրենքով սահմանված կարգով և չափով մուծել հարկեր, կատարել պարտադիր այլ վճարումներ:

Համաձայն «Գույքահարկի մասին» օրենքի 2-րդ հոդվածի՝ գույքահարկը սեփականության իրավունքով նշված օրենքի 3-րդ հոդվածում նշված անձանց պատկանող հարկվող օբյեկտ համարվող գույքի համար սույն օրենքով սահմանվող կարգով և չափով համապատասխան բյուջեներ վճարվող ուղղակի հարկ է, որը կախված չէ հարկ վճարողների տնտեսական գործունեության արդյունքներից:

Իրավահարաբերությունների պահին գործող Հարկային օրենսգրքի 447-րդ հոդվածի 6-րդ մասի՝ Օրենսգիրքն ուժի մտնելու օրվան հաջորդող ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար հարկ վճարողը կամ հարկային գործակալը վճարում է տույժ՝ 0.075 տոկոսի չափով, այդ թվում՝ նաև այն դեպքում, եթե տույժերի հաշվարկն սկսվել է մինչև Օրենսգրքի ուժի մեծ մտնելը:

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի՝ համայնքի ղեկավարը օրենքով սահմանված կարգով կազմակերպում է գույքահարկի գանձումը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 38-րդ, «Գույքահարկի մասին» օրենքի 2-րդ, 3-րդ, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 53-րդ, 58-60-րդ հոդվածներով, **որոշում եմ.**

1. Քաղաքացի Գարեգին Մարգարյանից հօգուտ Ջրվեժ համայնքի բյուջեի գանձել 152 967 (մեկ հարյուր հիսուներկու հազար ինը հարյուր վաթսուներեք) Հայաստանի Հանրապետության դրամ, որպես վճարման ենթակա փոխադրամիջոցի գույքահարկի գումար, որից՝ 32 634 (երեսուներկու հազար վեց հարյուր երեսունչորս) Հայաստանի Հանրապետության դրամը որպես պարտավորությունը չկատարելու արդյունքում հաշվարկված տույժ:

2. Որոշումն օրենքով սահմանված կարգով եռօրյա ժամկետում պատշաճ ձևով ուղարկել Գարեգին Մարգարյանին:

3. Որոշումն ուժի մեջ է մտնում վարույթի մասնակիցներին իրազեկելուն հաջորդող օրվանից:

4. Սույն որոշումը կարող է բողոքարկվել վարչական կարգով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ Վարչական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով՝ վարչական ակտն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում:

5. Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով այն ենթակա է հարկադիր կատարման՝ Հայաստանի Հանրապետության ԱՆ ԴԱՀԿ ծառայության միջոցով՝ անբողոքարկելի դառնալուց հետո:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Ռ.ՊԵՏՐՈՍՅԱՆ



2019 թ. հոկտեմբերի 24
գ. Ջրվեժ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«24» հոկտեմբերի 2019 թվականի N 703-Ա

ԳՈՒՄԱՐԻ ԳԱՆՁՄԱՆ ՊԱՀԱՆՋ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Զրվեժ համայնքի ղեկավարի որոշման կարգավորման առարկան.

Քաղաքացի Ներսես Աբոյանը, հանդիսանալով գույքահարկ վճարող սուբյեկտ, «Գույքահարկի մասին» օրենքով սահմանված կարգով չի կատարել գույքահարկ վճարելու պարտականությունը, ինչի կապակցությամբ 2019 թվականի սեպտեմբերի 30-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի հիմքով Զրվեժի համայնքապետարանի աշխատակազմում հարուցվել է վարչական վարույթ՝ գույքահարկի գումարի գանձման հարցի քննության նպատակով:

